ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ
ք. Երևան, Ն. Զարյան 27, հեռ. (+374 11) 518 201, էլ. փոստ՝ arabkir@yerevan.am

№ 25/01-25/338 «13» 01 2021 թ.

«ԼԻՖՏԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Վ. ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ
ք. Աբովյան, 4-րդ մ/2, 31շ.բն.35

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԼԻՖՏԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 19.05.2020 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11-2» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագրով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բ/շ վերելակների դետալները և սարքավորումները տեղադրումով (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել տեղադրված ապրանքը և վճարել դրա համար»:

Նշված պայմանագրով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ էր սահմանվել՝ մինչև 30.08.2020թ.:

Սույն պայմանագիրը՝ 3664100 /երեք միլիոն վեց հարյուր վաթսունչորս հազար հարյուր/ դրամի փոխարեն կատարվել է 2015907 /երկու միլիոն տասնհինգ հազար ինը հարյուր յոթ/ ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 1648193 /մեկ միլիոն վեց հարյուր քառասունութ հազար հարյուր իննսուներեք/ ՀՀ դրամի չափով ապրանքների մատակարարումներ, այսինքն պայմանագրով նախատեսված թիվ 24-րդ չափաբաժինը չի մատակարարվել, իսկ 5, 6, 8, 9, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 20, 22, 25 և 26-րդ չափաբաժինները թերամատակարարվել են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի

10

գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Խախտվել է պայմանագրի 1.1 կետը, այսինքն չի կատարվել պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված քանակի ապրանքների մատակարարումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է նշված պայմանագրերով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվել է Ընկերության հետ կնքված ապրանքների մատակարարման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կատարող՝ Գ. Հովհաննիսյան
011 518-151